



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք  
 ՀՀ Կոտայքի մարզ. գ. Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ.060517670 էլ.փոստ:  
 verinptghni.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
24 ՀՈՒՆԻՍԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ N 104**

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ և 51-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով Չամիգար Գևորգյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Չամիգար Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող՝ ՀՀ Կոտայքի մարզ, Վերին Պտղնի, 4-րդ փողոց թիվ 7 հասցեում գտնվող 07-062-033-004 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նշանակության տնամերձ 0.1151 հա հողամասը/և դրա վրա գտնվող շինությունը/ և ՀՀ Կոտայքի մարզ, Վերին Պտղնի, 4-րդ փողոց 2-րդ փակուղի թիվ 7/1 հասցեում գտնվող 07-062-0033-0017 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման 0.03287 հա հողամասը միավորել և միավորված անշարժ գույքին տրամադրել նոր հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, Վերին Պտղնի, 4-րդ փողոց թիվ 7:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ



Գ.ՊՈՂՈՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք  
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48, Հեռ. 060517670 էլ. փոստ  
verinptghni.kotayq@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
24 ՀՈՒԼԻՍԻ 2018 թվականի N 105**

**«ԱՐՍԵՆ ՌՈՍՏՈՄՅԱՆ» ԱԶ-ԻՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ  
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, Վերին Պտղնի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 52-Ն որոշման պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով «Արսեն Ռոստոմյան» ԱԶ-ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ**

1. Բավարարել «Արսեն Ռոստոմյան» ԱԶ-ի կողմից ներկայացված հայտը և տրամադրել տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն՝ 2018 թվականի 3-րդ եռամսյակի համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝

Գ. ՊՈՂՈՍՅԱՆ